ԼԻԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՃՇՀԱՀ

ՆԱՐԵԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (1910–1912 ԹԹ.)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային-կրոնական հարցը մշտապես եղել է Օսմանյան կայսրության ներքաղաքական գլխավոր խնդիրներից մեկը։ Անտեսվելով կամ հերքվելով Բ. Դռան կողմից՝ այն, ի վերջո, գրավում է մեծ տերությունների ուշադրությունն ու վերածվում արտաքին քաղաքական թնջուկի՝ «Արեւելյան հարց» ընդհանուր անվան ներքո։

Երբեմնի փառքը եւ հզորությունը կորցրած Օսմանյան կայսրությունը հայտնվում է մեծ տերությունների տնտեսական եւ քաղաքական շահերի կիզակետում։ Նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր արտոնություններ կորզել եւ իր վերահսկողությունը հաստատել Թուրքիայի ցամաքային ու ծովային ճանապարհների վրա։ Դեռեւս 1870-ական թթ. Ավստրո-Հունգարիան առաջ քաշեց Մակեդոնիայով եւ Սալոնիկ քաղաքով Միջերկրական ծով դուրս գալու ծրագիր։ 1908 թ. այդ երկրի կառավարությունն Աբդուլ Համիդից առանձնաշնորհ է ստանում՝ դեպի Սալոնիկ երկաթուղի կառուցելու համար[1]։ Այսպիսով սրվեց մակեդոնական ճգնաժամը, որի հաղթահարման նպատակով նույն թվականի հուլիսի 24-ին օսմանյան ընդդիմադիր ուժերին գլխավորող «Միություն եւ առաջադիմություն» («Իթթիհատ վե թերաքքը») կոմիտեն իրականացնում է հեղաշրջում եւ հռչակում «Սահմանադրական կարգերի» վերականգնման մասին։ Սկսվում է Օսմանյան կայսրության «սահմանադրական երկրորդ շրջանը»։

---

[1] Հ. Սիմոնյան, *Ազատագրական պայքարի ուղիներում, գք. Գ., Երեւան, 2009, էջ 484։*

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԱԶԳԱՅՆԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԶԴԱԿՆԵՐԸ

Չնայած «սահմանադրական կարգերի եւ իրավահավասարության հաստատման» մասին իթթիհատականների բարձրագոչ հայտարարություններին, ազգային-կրոնական հարցը շարունակում էր մնալ Օսմանյան կայսրության ամենախրթին եւ բազմաշերտ հիմնահարցերից մեկը։ Նույնիսկ հայտնի չէր բնակչության հստակ թվաքանակը։ Բավական է օրինակ բերել եւ համեմատել միայն Արեւմտյան Հայաստանում իշխանությունների եւ պատրիարքարանի անցկացրած մարդահամարների արդյունքները, որպեսզի հասկանալի լինի ժողովրդագրական պատկերը եւ ազգային կրոնական հարցի անտեսված լինելը։ Ըստ 1906—07 թթ. մարդահամարի՝ Արեւմտյան Հայաստանում ընդհանուր բնակչության թիվը հասնում էր 3 147 880-ի, որոնց թվում հայերը 561 774-ն էին[2]։ Ըստ 1914 թ. իրականացրած մարդահամարի տվյալների՝ Արեւմտյան Հայաստանում ամբողջ բնակչության թիվը եղել է 3 880 343, որտեղ հայերի թիվը կազմել է 639 171[3]։ Հետագա տարիների թուրքական «ճշգրտված» տվյալներով՝ 1914 թ. այդ թիվը դարձել է 912 601, իսկ ընդհանուր բնակչությանը հիշյալ տարածքներում՝ 4 973 429[4]։ Արեւմտյան Հայաստանում հայ բնակչության թվաքանակի մասին ավելի ճշգրիտ տեղեկություն է պարունակում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1913 թ. իրականացրած մարդահամարը։ Ըստ պատրիարքարանի մարդահամարի տվյալների՝ միայն Արեւմտյան Հայաստանում հայերի թիվը եղել է 1 018 000 (մեկ միլիոն տասնութ հազար)[5]։ Պատրիարքարանի եւ իշխանությունների անցկացրած մարդահամարների արդյունքների միջեւ առկա տարբերությունը խոսում է ոչ թե աշխատանքի փոքր թերությունների, այլ Արեւմտյան Հայաստանում, հետեւաբար նաեւ ողջ կայսրությունում հայերի թիվը, նրանց դերն ու նշանակությունը նվազեցնելու՝ թուրքական իշխանությունների դիտավորության մասին։ Ինչ վերաբերում էր մահմեդականներին, ապա երիտթուրքերը շատ դեպքերում նրանց դիտարկում էին ոչ միայն որպես մեկ կրոնական, այլեւ մեկ ազգային հանրույթ՝ թուրք ազգի գերակայությամբ։

---

[2] *Տես* M. Servet, Late Ottoman population and its ethnic distribution, Nüfusbilim dergisi, Turkish Journal of population Studies, 2003, 25, 3—38, *էջ 11։*

[3] *Տես անդ, էջ 24։*

[4] *Տես անդ։*

[5] *Տես ՀՀԱԱ, ֆ. 57, ց. 1., գ. 399, թ. 6։*

1908 թ. հեղաշրջման հետեւանքով իշխանության եկած իթթիհատականները, որոնք հայտնի էին «երիտասարդ թուրքեր» կամ «երիտթուրքեր» անունով, ձեռնամուխ եղան ներկայացուցչական պալատի՝ օսմանյան խորհրդարանի վերստեղծմանը։ 1908 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ընթանում են խորհրդարանական ընտրությունները, որոնց միջոցով ձեւավորվում է օսմանյան երկպալատ խորհրդարանը։ Խորհրդարանի վերին պալատի՝ Այանի (ծերակույտ) 2/3-րդն էր միայն ընտրվում, իսկ 1/3-րդին նշանակում էր սուլթանը։ Այանի 53 ծերակուտականներից միայն երեքն էին ազգությամբ հայ[6]։ Ինչ վերաբերում է երեսփոխանական ժողովին (խորհրդարանի ստորին պալատին), ապա այն ձեւավորվում էր երկաստիճան՝ «գաղտնի» եւ «հավասար» ընտրությունների միջոցով[7]։ Ընտրություններից հետո երեսփոխանական ժողովում հայտնվեց 275 պատգամավոր, որոնցից 142-ը թուրք էին, 60-ը՝ արաբ, 25-ը՝ ալբանացի, 23-ը՝ հույն, 12-ը՝ հայ, 5-ը՝ հրեա, 4-ը՝ բուլղար, 3-ը՝ սերբ, եւ 1-ը՝ վալախ[8]։ Ինչ վերաբերում է պատգամավորների կուսակցական կամ կոմիտեական պատկանելությանը, ապա նրանց պատգամավորներից 160-ը իթթիհատական էին, 20—25-ը՝ ազատական (Ահրար կուսակցությունից), 4-ը՝ դաշնակցական, 2-ը՝ բուլղար կլուբիստ, 1-ը՝ սոցիալ-դեմոկրատ հնչակյան, եւ 70-ը՝ անկուսակցական[9]։ Այսպիսով՝ թե՛ Օսմանյան կայսրությունը եւ թե՛ նրա խորհրդարանն աչքի էին ընկնում ինչպես քաղաքական, այնպես էլ ազգային եւ կրոնական խայտաբղետությամբ։

1908 թ. հեղաշրջումից եւ սահմանադրական կարգերի վերահաստատումից հետո՝ սկզբնական շրջանում, երիտթուրքերը պատեհ առիթը բաց չէին թողնում ժողովուրդների իրավունքների հավասարության եւ եղբայրության մասին ամբոխահաճո հայտարարություններ անելու համար։ Չնայած սուլթանական վարչակարգի պնդումներին, թե երիտթուրքերն աստվածամերժ հրեա մասոններ են, իրականում իթթիհատականները հավատարիմ մնացին շարիաթին[10]։ Ավելին՝ իշխանության գալուց

---

[6] *Տե՛ս* В. И. Шпилькова, Младотурецкая революция 1908—1909 гг., Москва, 1977, *էջ 98։*

[7] *Տե՛ս* Н. С. Хнкоян, Выборы 1912 года в Турции и формирование антимладотурецкого блока, *ԼՀԳ, Երեւան, 1990, թ. 7, էջ 46։*

[8] *Տե՛ս* A. Kuran, Osmanleimparatorluğunda inkilâp hareketler ve milli mücadele, Istambul, 1956, *էջ 477։*

[9] *Տե՛ս* Ա. Համբարձան, *Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը եւ ազատագրական շարժումներն Արեւմտյան Հայաստանում(1908—1914), Երեւան, 1979, էջ 14։*

[10] *Տե՛ս* Дж. Киракосян, Младотурки перед судом истории, Ереван, 1986, *էջ 72—73։*

հետո երիտթուրք պաշտոնյաները ժամանակ առ ժամանակ «հիշեցնում» էին իրենց այլազգի եւ այլադավան գործընկերներին Օսմանյան կայսրությունում թուրք ժողովրդի՝ այլ ազգերի նկատմամբ ունեցած իրավական եւ քաղաքական գերակայության մասին։ Երիտթուրքերն սկզբում երաշխավորում էին, որ այդ «հիշեցումները» իրենց շարքերում տեղ գտած որոշ անհատների ինքնագործունեությունն են։ Սակայն հետագայում՝ 1910—1911-ից, երիտթուրքերն սկսեցին բացահայտ կերպով ոտնահարել օսմանյան մյուս ժողովուրդների, հատկապես ազգային փոքրամասնությունների ազգային եւ կրոնական իրավունքները։ Հետաքրքիր է, որ ազգային եւ կրոնական մոլեռանդությամբ հիմնականում աչքի էին ընկնում «դեոնմե» (կրոնափոխ) իթթիհատականները։ Վերջիններիս այլատյաց քաղաքականությունն իր արձագանքները գտավ նաեւ օսմանյան խորհրդարանում։

1910 թ. հունվարի 30-ին օսմանյան երեսփոխանական ժողովում քննարկվեց մարդահամարի օրինագիծը, որի ընթացքում էլ խորհրդարանի պատմության մեջ առաջին անգամ բարձրացվեց ազգային հարցը։

Քննարկման նյութ է դառնում այն խնդիրը, թե պ՞ետք է արդյոք փաստաթղթերի մեջ կրոնի հետ արձանագրել նաեւ մարդու ազգությունը։ Գոզանի հայ պատգամավոր Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրադ) առաջարկում է, որ նախ նշվի մարդու դավանանքը, ապա՝ ազգությունը։ Հ. Պոյաճյանի տեսակետը պաշտպանում է Մալաթիայի պատգամավոր Հոջա Թեւֆիկը՝ օրինակ բերելով եզդիներին։ Հայ պատգամավորն իր ելույթն ամփոփում է այն համոզումով, որ անհրաժեշտ է բոլոր դեպքերում ընդգծել մարդու ազգությունը[11]։

Զգուշանալով իր ելույթին ազգայնական որակումներ տալուց՝ Էրզրումի հայ պատգամավոր Հովհաննես Սերենկուլյանը (Վարդգեսը) նախ շեշտում է, որ առհասարակ նպատակահարմար է «օսմանցի» եզրույթի կիրառումը, սակայն, ըստ հայ պատգամավորի, քանի որ կրոնը բոլոր դեպքերում նշվում է, ապա տվյալ պարագայում նաեւ ազգությունը նշելու անհրաժեշտություն է առաջանում։ Որպես իր խոսքերի հիմնավորում՝ Վարդգեսը հետեւյալ միտքն է արտահայտում. «Ինչ վնաս ատկե. ընդհակառակը, մենք կունենանք այն օգուտը, որ կջնջեն այն տարտամ վա-

[11] *Տե՛ս* Meclisi Mebusan Zabıt Ceridesi, inikad 39, 30 kanunusi 1325 (1910) D: 1, C: 2, içtima senesi: 2, *էջ 264։*

խը, որ կա ժողովրդին մեջ, թե կձգտին թրքացնել զինքը...»[12]։ Պատգամավորներից մեկը դահլիճից բղավում է, թե այդպիսի բան չկա, ինչին Վարդգեսը պատասխանում է, թե այդ արտահայտության հեղինակը չի շփվում ժողովրդի՝ մասնավորապես քրիստոնյաների հետ։ Բանավեճն էլ ավելի է թեժանում երբ Ռահմի բեյը պաշտպանում է ազգության շեշտման անհրաժեշտությունը՝ օրինակ բերելով Սալոնիկի հույների բողոքը, ըստ որի՝ եթե ազգությունները ճիշտ նշված լինեին, ապա իրենք 2-ի փոխարեն կունենային 3 պատգամավոր[13]։ Այսպիսով՝ քանի որ խորհրդարանը բաժանվել էր 2 ճամբարների, ուստի որոշում է կայացվում օրինագծի այս հոդվածն ուղարկել հանձնաժողովին՝ վերանայման։ Երիտթուրքերը, որ դեռեւս չունեին քրդերի եւ որոշ արաբների աջակցությունը, հայ պատգամավորների իրավական, հիմնավոր առաջարկներին դեմ լինելով հանդերձ, դրսեւորեցին իրենց հատուկ խորամանկություն եւ ժամանակավորապես լռեցրին իրենց ազգայնամոլ գաղափարների վերաբերյալ բոլոր շշուկները։

ԱԶԳԱՅՆԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՐՈՆԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազգային հարցի հետ սերտ կապված էր նաեւ պետական եւ մյուս լեզուների կիրառմանն առնչվող օրինագծերի՝ 1911 թ. քննարկումը։ Սակայն մինչ այդ հարկավոր է անդրադառնալ մի քանի բախտորոշ իրադարձությունների, որոնք տեղի են ունեցել երիտթուրքերի նախաձեռնությամբ։

Դեռեւս 1910 թ. մայիսին երիտթուրքական վերնախավը ձեռնամուխ է լինում ընտրական օրենքում եւ սահմանադրության համապատասխան հոդվածներում փոփոխություններ իրականացնելուն[14]։ Այդ փոփոխությունները հնարավորություն էին տալու երիտթուրքերին խորհրդարանական ընտրություններում հաջողել կայսրության գավառների տոհմիկ կղերաավատական ազնվականության (էշրաֆներ) հաղթանակը, որն էլ կդառնար «Իթթիհատ ....»-ի քաղաքական հենարանը խորհրդարանում։

---

[12] *«Ազատամարտ», 31. 01. 1910։*

[13] *Տե՛ս անդ։*

[14] *Տե՛ս* N. Martirosyan, The Ashrafs in the Ottoman Parliament, Review of Armenian studies, Yerevan 2021, թ. 1, *էջ 86–95։*

Երիտթուրքերի այս նախաձեռնությունը ո՛չ պատահական էր, ո՛չ էլ՝ ինքնանպատակ։ Խորհրդարանում հենարան ունենալու առումով սա առաջին քայլն էր։ Ընտրական օրենքի փոփոխությունով իրենց վերարտադրությունն ապահովելուց հետո երիտթուրքերը ձեռնամուխ եղան որդեգրած հետադիմական գաղափարները պետական քաղաքականության անկյունաքար դարձնելուն։

1910 թ. Սալոնիկում կայացած «Իթթիհատ ....»-ի ամենամյա համագումարի ոչ պաշտոնական հանդիպմանը երիտթուրքերը քննարկում են Թուրքիան միատարր դարձնելու ծրագիրը[15]։ Այս ծրագիրն իրենից ենթադրում էր «կայսրության բնակչության օսմանականացում», իսկ քանի որ, ըստ Կ. Պոլսում Միացյալ Թագավորության դեսպան Ջ. Լոուտերի բնութագրման, երիտթուրքերի համար «օսման» նշանակում էր «թուրք», ապա այդ «օսմանականացման» տակ պետք էր հասկանալ կայսրության մյուս ազգերի տարրալուծումն ու թուրքացումը[16]։

Չնայած երիտթուրքերի ընդունած հետադիմական գաղափարախոսությանն ու դրա իրականացման զարհուրելի ծրագրի վտանգավորությանը՝ դրանց արժանի գնահատական չտվեցին ո՛չ քաղաքական մյուս ուժերը, ո՛չ օսմանյան խորհրդարանի խմբակցությունները։ Արդյունքում այդ այլատյաց գաղափարներն սկսեցին հաճախակի շրջանառվել կայսրության ծայրագավառներում։ Օրինակ՝ 1910 թ. հուլիսի 10-ին՝ սահմանադրության երկամյակին նվիրված հանդեսի ժամանակ, թուրքերը պահանջում են, որ հայերը թուրքերեն արտահայտվեն[17]։ Լեզվական ազգայնամոլությունը գավառներում տարածելուց հետո երիտթուրքերն այն տեղափոխեցին մայրաքաղաք, նույնիսկ՝ խորհրդարան։

1911 թ. փետրվարի 3-ին խորհրդարանը քննարկում է օրենքներն ու կանոնագրերը հրատարակելու եւ քաղաքացիներին ծանուցելու մասին օրինագիծը, որի երկրորդ հոդվածի համաձայն՝ օրենքներն ու կանոնագրերը պաշտոնաթերթում եւ Կ. Պոլսի երեք հայտնի թերթերում հրատարակելուց հետո պետք է ուղարկվեին գավառային իշխանություններին, որպեսզի «յարմար ու կարելի ձեւով մը հաղորդուի» ժողովրդին[18]։ Հենց

---

[15] *Տե՛ս* В. Н. Дадрян, История армянского геноцида, Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван 2007, *էջ 230։*

[16] *Տե՛ս անդ։*

[17] *Հ. Պետրոսյան, Գեղամ Տեր-Կարապետյան (Մշո Գեղամ). կյանքը եւ ստեղծագործությունը, Երեւան, 1983, էջ 56։*

[18] *Տե՛ս «Ազատամարտ», 4.02.1911։*

այս հոդվածն էլ դառնում է բուռն քննարկումների եւ վիճաբանությունների պատճառ։ Պատգամավորների մի մասը կարծում էր, որ պետք է օրենքները թարգմանել տեղական մյուս լեզուներով, որպեսզի ժողովրդի համար հասկանալի լինի, իսկ մյուս մասը, առաջնորդվելով երիտթուրքերի որդեգրած պանթուրքական գաղափարներով, պաշտպանում էր միմիայն թուրքերեն հրապարակելու անհրաժեշտությունը։

Կ. Պոլսից հույն պատգամավոր Պ. Քոզմիթին առաջարկում է օրենքները հրատարակել նաեւ տեղական լեզուներով՝ հաշվի առնելով, որ նահանգներում ժողովուրդը չի տիրապետում թուրքերենին[19]։ Իր ազգակցի տեսակետը պաշտպանում է Յ. Պոշոն, որն ավելացնում է, որ ոչ ոք չի ժխտում թուրքերենի պաշտոնական լեզու լինելը, պարզապես այդ լեզուն հասկացող թուրքեր քիչ կան[20]։

Որոշ մահմեդական պատգամավորներ ընդդիմանում են հույների առաջարկին։ Այսպես՝ Հալեպի պատգամավոր Ալի Ջենանին հակառակվում է՝ շեշտելով, որ պաշտոնական լեզուն թուրքերենն է, եւ ուրիշ լեզուներով չի կարելի թարգմանել օրենքները։ Որպես հարցի լուծում՝ վերջինս առաջարկում է, որ մուխթարները (ավագ, գյուղապետ) ժողովրդին բացատրեն օրենքներն ու կանոնագրերը։ Քուրդ պատգամավոր Թահա էֆենդին նույնպես շեշտում է, որ օրենքները անհասկանալի են ժողովրդին, եւ առաջարկում է երկրորդ հոդվածն ուղարկել համապատասխան հանձնաժողովին՝ քննելու եւ նոր ելք առաջարկելու համար։ Բաղդադի արաբ պատգամավոր Շեւքեթ փաշան նշում է, որ նույնիսկ մուխթարները ոչինչ չեն հասկանում թուրքերեն կարդալիս, եւ հետեւաբար մինչեւ տեղի լեզուներով դրանք չթարգմանվեն, ոչինչ չի հասկացվի։ Ալբանացի պատգամավոր Կանի բեյը համաձայնում է թարգմանության գաղափարին, սակայն ավելացնում է, որ նախ՝ թարգմանությունը նոր ծախսեր է առաջ բերելու, եւ երկրորդ՝ թարգմանության մեջ կարող են վրիպումներ թույլ տրվել[21]։

Ալբանացի երեսփոխանի մտահոգությունն անտեղի է համարում Գ. Զոհրապը՝ նշելով. «Ատիկա այնքան ալ կաեւոր պարագայ մը չէ. միշտ բնագրին կարեւորութիւն պիտի տրուի»[22]։

---

[19] Տե՛ս MMZC, inikad 42, 3 şubat 1326 (1911), D: 1, C: 1, içtima senesi: 3, էջ 46։

[20] Տե՛ս «Բյուզանդիոն», 04.02.1911։

[21] Տե՛ս անդ։

[22] Անդ։

Իր կարծիքն է հայտնում նաեւ Վարդգեսը։ Նա բացատրում է, որ ոչ մի խնդիր չկա օրենքն այլ լեզուներով թարգմանելու մեջ, եւ որպես օրինակ բերում է Ամերիկայի Միացյալ Նահանգների մոտեցումն այս հարցին։ Ասում է, որ թեեւ ԱՄՆ-ում ընդամենը 50 հազար հայ կա, սակայն օրենքներ մշակելուց հետո տեղական կառավարությունն իր հայտարարությունը հրատարակում է նաեւ հայերեն։ Պատգամավորը նշում է, որ թուրքերեն իմանալը բխում է ցանկացած քաղաքացու շահերից, սակայն թուրքերենին չտիրապետելու դեպքում նրանից օրենքների իմացություն պահանջել չի կարելի[23]*։ Վարդգեսը մտահոգ էր այն պարզ պատճառով, որ մարդու՝ օրենքներ չիմանալը նրան չէր ազատի պատասխանատվությունից, ուստի անհրաժեշտ էր օրենքները հասանելի դարձնել բոլորին։ Նա հայտնում է, որ ԱՄՆ-ում տարեկան 5—10 օրենք է հրապարակվում, բայց պետությունը խնայողություն չի անում այդ օրենքների թարգմանության վրա*[24]*։*

Վարդգեսի բերած երկաթյա տրամաբանության վրա հիմնված այդ բացատրությունից հետո Կուտինայի թուրք պատգամավոր Ահմեդ Ջեմալ բեյը բացահայտ ցույց է տալիս «Իթթիհատ ....»-ի պանթուրքական մոտեցումն այս հարցին՝ նշելով, որ իրենք ոչ թե խնայողության, այլ ազգերի միաձուլման համար են անում[25]*։*

Ջեմալի հայտարարությունը պատճառ է դառնում, որ Վարդգեսը բռնկվի. «Ինչ ըսել կ՚ուզէք. կ՚ուզէք որ Թուրք ըլլամ. երբէ՛ք. Այդ բանը ոչ ոքէ չէք կրնար պահանջել... Երբէ՛ք չէք կրնար պահանջել, որ ես, որ Հայ եմ, թողում իմ լեզուս։ Սահմանադրութիւնն այս կերպ կ՚տրամադրէ. Ես համամիտ եմ որ տեղական լեզուներով ալ թարգմանուին օրէնքները»[26]*։ Բուլղար պատգամավոր Բ. Տորեւը համաձայնում է Վարդգեսի խոսքերին։*

Հոդվածի քննարկումն առավել թեժանում է, երբ արաբ պատգամավոր Հոջա Էսադը հետեւյալ մեղադրանքն է ներկայացնում քրիստոնյա պատգամավորներին. «Դո՛ւք երեք տարիէ ի վեր տեսակ տեսակ խնդիրներ կ՚յուզէք խռովութիւն հանելու համար։ Լեզուական խնդիրին մէջ ալ...»[27]*։ Արաբ պատգամավորի ազգայնամոլությունն ու կրոնամոլությու-*

---

[23] *Տե՛ս «Ազատամարտ», 04.02.1911։*

[24] *Տե՛ս* MMZC, inikad 42, 3 şubat 1326 (1911), D: 1, C: 1, içtima senesi: 3, *էջ 49։*

[25] *Տե՛ս անդ։*

[26] *«Բյուզանդիոն», 04.02.1911։*

[27] *Անդ։*

նը, կարծես, համընկնում էին «Իթթիհատ ....»-ի ծրագրերին եւ ազդանշան դառնում նրանց աշխուժացման համար։ Պատգամավորը խոսքը դեռ չէր ավարտել, երբ Վարդգեսը մոտենում է ամբիոնին եւ խստորեն պահանջում ներում խնդրել, սակայն դահլիճի կենտրոնում նստած Ֆեյզին, Մեհմեդ Ալին, Թալեաթը եւ եւս մի քանիսն սկսում են ծափահարել էսադին։ Վարդգեսը, դիմելով նրանց, բղավում է. «Ամո՛թ է, ամո՛թ երբ ասանք խօսք մը կ'ծափահարէք, ըսել է դուք իսլամի եւ քրիստոնեայի խնդիր յարուցանել կ'ուզէք. մենք երբեք խռովութիւն յարուցանող չենք. պէտք է անմիջապէս ետ առնուի այդ խօսքը»[28]։

Պատգամավորներ Բ. Տորեւը, Դ. Վլախովը, Յ. Պոշոն եւ Պ. Քոզմիթին պահանջում են, որ արաբ պատգամավորը ներում խնդրի։ Էսադը նշում է, որ չի ցանկացել վիրավորել քրիստոնյա գործընկերներին, ապա բերում է մի անհեթեթ արդարացում, թե քանի որ Յ. Պոշոն եւ Պ. Քոզմիթին միշտ ազգային եւ լեզվական խնդիրներ են բարձրացնում, իրենց ընտրող արաբներն իբր թե մեղադրում են իրենց, թե ինչու իրենք նույնպես չեն բարձրաձայնում այդպիսի հարցեր։ Ապա արաբ պատգամավորն ավելացնում է, թե իր կրոնը պարտադրում է ներողամիտ լինել, եւ որ իրենք ներում են քրիստոնյա գործընկերներին[29]։ Վարդգեսը հակադարձում է. «Մեր աւետարանն ալ ներողամտութիւն կ'պատուիրէ. մենք ալ ձեզ կ'ներենք»[30]։

Վարդգեսի եւ արաբ պատգամավորի վիճաբանությունից հետո Գ. Զոհրապը պաշտպանում է տեղական լեզուների օգտագործման տեսակետը՝ նշելով, որ օրենքներն ստեղծվում են, որպեսզի ժողովուրդը հասկանա, թե ինչ պետք է անի եւ ինչպիսի պատժի կենթարկվի, եթե խախտի օրենքը։ Ապա, շարունակելով ելույթը, հետեւյալ միտքն է արտահայտում. «Ասկէ առաջ, երբ տակաւին տպագրութիւն չկար, մունետիկներն էին որ կը ծանուցանէին օրէնքներն ու կառավարական որոշումները։ Հիմա որ թերթեր գոյութիւն ունին, ո՛ եւ է անպատեհութիւն չկայ գաւառի պաշտօնաթերթերուն մեկ մասը տեղական լեզուով հրատարակելու մէջ»[31]։

---

[28] *Անդ։*

[29] *Տե՛ս* MMZC, inikad 42, 3 şubat 1326 (1911), D: 1, C: 1, içtima senesi: 3, *էջ 51։*

[30] *«Բյուզանդիոն», 04.02.1911։*

[31] *Անդ։*

Այսպիսի հիմնավորումից հետո անգամ խալիլ բեյն է համաձայնում Զոհրապի հնչեցրած կարծիքին։ Սակայն 44 կողմ, 97 դեմ ձայներով առաջարկը մերժվում է։

Այսպիսով՝ երիտթուրքերն առաջին անգամ բացահայտ ցույց տվեցին կրոնական անհանդուրժողականության, ազգայնամոլ պանթուրքական գաղափարների վրա խարսխված իրենց իրական նպատակները։ Դրանց բացահայտորեն պետական քաղաքականություն դարձնելուն անակնկալ կերպով խոչընդոտեցին այն խութերը, որոնց հանդիպեցին երիտթուրքերը՝ սկսած 1911 թ. աշնանից կայսրության ներքին եւ արտաքին քաղաքական կյանքում։

Աջգաձին հարցը 1912 թ. ընտրություններում

Ներքաղաքական ճգնաժամն Օսմանյան կայսրությունում հանգուցալուծվեց 1911 թ. դեկտեմբերին՝ սահմանադրության աղճատումով եւ «Իթթիհատ ....»-ի ամբողջատիրական վարչակարգի հաստատումով։ Դեկտեմբերի 5-ին իթթիհատականները, չնայած ընդդիմության մղած կատաղի պայքարին, մեկ ընթերցումով ընդունում են սահմանադրության 35-րդ հոդվածի փոփոխությունը, որով փաստացի կառավարությանն իրավունք էր վերապահվում լուծարելու խորհրդարանը։ Հետեւանքը եղավ այն, որ վարչապետի որոշմամբ եւ խորհրդարանի վերին պալատի (Այան) համաձայնությամբ՝ սուլթան Մեհմեդ Ռեշադը 1912 թ. հունվարի 5-ին ստորագրեց հրամանագիր, որով օսմանյան խորհրդարանը լուծարվում էր[32]։

Օսմանյան սահմանադրության 7-րդ եւ 43-րդ հոդվածները պահանջում էին, որ խորհրդարանի հարկադիր արձակուրդ գնալուց կամ լուծարվելուց երեք ամիս անց սկսվեն նոր ընտրությունները։ Նախկին խորհրդարանի լուծարումից հետո իթթիհատականները համոզված չէին, թե կկարողանան մեծամասնություն կազմել նոր խորհրդարանում։ Թե՛ «Իթթիհատ ....»-ի եւ թե՛ ընդդիմադիր «Հյուրիեթ վե իթթիլյաֆ»-ի («Ազատություն եւ համաձայնություն») համար կարեւոր էր, թե որ քաղաքական ուժին կաջակցեն հայկական կուսակցությունները։ Ուստի իթթիհատականների համար անհրաժեշտություն դարձավ Հայ հեղափոխական դաշնակցության հետ համագործակցությունը։ Այս նպատակով նրանք

[32] *Տե՛ս «Ազատամարտ», 6.02.1912։*

1912 թ. հունվարի 7-ին հուշագրով դիմում են ՀՅԴ-ին՝ առաջարկելով հանդես գալ միասնաբար[33]։ Միաժամանակ իթթիհատականները տեղեկացնում են, որ պատրաստվում են Արեւմտյան Հայաստանում իրականացնել անհրաժեշտ բարեփոխումներ եւ առաջարկում են կազմել հուշագիր։

Դաշնակցությունը ներկայացնում է հուշագիր, որտեղ ներկայացված պահանջների առնվազն կեսն ուղիղ կապ ուներ ազգային հարցի հետ։ Հուշագրի 1-ին կետով պահանջվում էր, դաշնակցության հետ համաձայնեցնելով, Արեւմտյան Հայաստանում վալիներ (կառավարիչ, նահանգապետ) նշանակել այն մարդկանց, որոնք վայելում էին հայերի վստահությունը։ 3-րդ եւ 4-րդ կետերը վերաբերում էին Արեւմտյան Հայաստանում ազգությամբ հայերին վարչական պաշտոնների նշանակելուն։ 2-րդ կետով պահանջվում էր օսմանյան խորհրդարանում հայազգի պատգամավորների թվաքանակը հասցնել առնվազն 20-ի։ 8-րդ կետով պահանջվում էր պաշտոններ չտալ այն քրդերին, որոնք զբաղվել են թալանով։ Եւ վերջապես՝ 9-րդ կետով պահանջվում էր Արեւմտյան Հայաստանում չվերաբնակեցնել գաղթական մուսուլմանների՝ մուհաջիրներին[34]։

«Միություն եւ առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն անվերապահորեն ընդունում է բոլոր այս պահանջները։ 1912 թ. փետրվարի 13-ին Կ. Պոլսում ստորագրվում է համաձայնագիրը[35]։ Սակայն երբ «Իթթիհատ ....» կուսակցության համար ակնհայտ դարձավ, որ վարչական լծակների գործադրման արդյունքում խորհրդարանում իր համար ապահովված է մանդատների մեծամասնությունը, համաձայնագիրը մոռացության մատնվեց։

Դաշնակցությունն իր 6-րդ ընդհանուր ժողովի որոշումով օսմանյան խորհրդարանի իր թեկնածուներին եւ պաշտոնաթերթերի խմբագիրներին արգելում է ընդգրկվել կենտրոնական կամ գավառային խորհուրդների մեջ[36]։ Հաշվի առնելով ընտրական պայքարի եւ «Իթթիհատ ....»-ի հետ հարաբերությունների սրումը՝ ՀՅԴ-ն գտնում էր, որ նրանց ներկայությունը կարող է կաշկանդել տեղական մարմինների գործունեությունը։

---

[33] *Տե՛ս* Ե. Փամպուքեան, *Նիւթեր Հ. Յ. դաշնակցութեան պատմութեան համար, հտ. Ժ., Պեյրութ 2014, էջ 87։*

[34] *Տե՛ս* «Материалы политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии, Армянский вопрос и геноцид армян в Турции(1913—1919)», под. редакции Вардгес Микаелян, Ереван 1995, *էջ 35։*

[35] *Տե՛ս* Ե. Փամպուքեան, *Նիւթեր Հ.Յ.Դ..., էջ 89։*

[36] *Տե՛ս «Հայրենիք», 26.03.1912։*

Ուշագրավ է, որ Գ. Զոհրապն ընտրապայքարի ժամանակ հերքում է այն տեսակետը, թե նախկին եւ գործող վարչակարգերի միջեւ տարբերություն չկա։ Նա կարծում էր, թե «Իթթիհատ ....»-ի բռնած ազգայնական ուղղվածությունը կարելի է մեղմացնել[37]։ Անկասկած՝ Զոհրապի դիրքորոշումը բացատրվում է «Իթթիհատ ....»-ից հայ ժողովրդին սպառնացող իրական վտանգի գիտակցումով եւ այն հնարավորինս մեղմելու հույսով։

1912 թ. ապրիլի 19-ին պատրիարքարանը հանդես է գալիս պաշտոնական հայտարարությամբ՝ օսմանյան խորհրդարանի ընտրություններում այդ պահին ընտրված հայ պատգամավորների քանակի վերաբերյալ։ Հայտարարությունում ասված էր. «Ս. Պատրիարք Հայրն նկատողութեան առնելով որ Օսմ. Խորհրդարանի անդամակցելու համար՝ մինչեւ ցարդ ութ երեսփոխան ընտրուած են միայն, նոյն իսկ նախորդ անգամի թիւէն աւելի պակաս, թէ պաշտօնական մարմիններէ հասած տեղեկութեանց համաձայն՝ ընտրութեանց մէջ զանազան միջոցներ ի գործ դրուած են Հայ տարրը զրկելու համար իր արդար իրաւունքէն, ինքն ստիպուեր է՝ ինչպէս նախապէս թագրիր մատուցուելով Բ. Դրան բանակցիլ պատկանեալ վարիչ մարմնոյն հետ բանիւ բերանոյ....»[38]։

Պատրիարքի բողոքները ոչ մի արդյունք չտվեցին։ 1912 թ. գարնանն օսմանյան խորհրդարանում հայտնվեց 10 հայ պատգամավոր, ինչը չէր համապատասխանում արեւմտահայերի իրական թվաքանակին. Կ. Պոլսից՝ Գրիգոր Զոհրապ եւ Պետրոս Հալաճյան, Էրզրումից՝ Հովհաննես Սերենկուլյան (Վարդգես) եւ Գարեգին Փաստրմաջյան (Արմեն Գարո), Վանից՝ Օնիկ Դերձակյան (Արշակ Վռամյան), Իզմիթից (Ռոդոսթո)՝ Հակոբ Բոյաջյան, Հալեպից՝ Հարություն Պոշկեզենյան, Իզմիրից (Զմյուռնիա)՝ Վահան Պարտիզպանյան, Սվազից՝ Կարապետ Փաշայան, Մուշից՝ Գեղամ Տեր-Կարապետյան։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ չնայած 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման հետեւանքով վերահաստատված «սահմանադրական կարգերին», իրականում Օս-

---

[37] *Տե՛ս* Ա. Շարուրյան, *Գրիգոր Զոհրապի կյանքի եւ գործունեության տարեգրություն, Էջմիածին, 1996, էջ 361։*

[38] *«Ազատամարտ», 20.04.1912։*

մանյան կայսրությունում մոլեգնում էին ազգայնամոլությունը, կրոնամոլությունն ու առհասարակ այլատյացությունը, որոնք օրըստօրե իրենց մեջ էին ընդգրկում խորհրդարանական նորանոր ուժերի։ Երիտթուրքերը, մի կողմից՝ ընդունելով ազգայնամոլական գաղափարախոսությունը որպես պետական քաղաքականություն, եւ մյուս կողմից՝ դրժելով իրենց իսկ տված խոստումները նախընտրական գործընթացներում, իրենց առաջ նպատակ դրեցին կայսրությունում պահպանել «Իթթիհատ ....»-ի կուսակցական մենիշխանությունը եւ հաստատել թուրք տարրի ազգային-կրոնական գերակայությունն օսմանյան մյուս ազգերի նկատմամբ։ Այդ իսկ պատճառով նրանք ոչ մի քայլ չձեռնարկեցին խորհրդարանի ազգային եւ կրոնական փոքրամասնությունների հետ համագործակցելու ուղղությամբ։ Ավելին՝ նրանք օգտագործեցին խորհրդարանի հետադիմական ուժերին՝ ինչպես ազգային եւ կրոնական անհանդուրժողականությունը պատգամավորների մեջ սերմանելու, այնպես էլ երկրում ամբողջատիրական վարչակարգ հաստատելու համար։ Այսպիսով՝ երիտթուրքերի որդեգրած պանթուրքական եւ պանիսլամական քաղաքականության պատճառով ազգային-կրոնական հարցը վերածվեց Օսմանյան կայսրության հիմքերը սասանող հուժկու փոթորկի։

РЕЗЮМЕ

24 июля 1908 года комитет «Иттихад ве тераккы» («Союз и прогресс»), возглавлявший оппозиционные силы Османской империи, совершил государственный переворот. Несмотря на громкие заявления иттихадистов об «установлении конституционного порядка и равноправия», национально-религиозный вопрос оставался одним из самых сложных и многоплановых в Османской империи. В1910—1911 гг. младотурки, приняв пантюркистскую идеологию и заручившись поддержкой мусульманской родоплеменной знати, стали открыто нарушать национально-религиозные права национальных меньшинств по всей империи, в том числе и в ее парламенте. 1912 г. для преодоления внутриполитического кризиса младотурки начали прямое сотрудничество с партией Армянская революционная федерация. Был составлен меморандум, по которому младотурки обязались решить многие вопросы, в том числе и национальные, в Западной Армении, но когда младотуркам стало ясно, что на выборах побежда-

ет «Иттихад....», они сразу же отказались от пунктов меморандума, который они же сами подписали. Таким образом, национально-религиозный вопрос в Османской империи обострился в результате проводимой младотурецкими властями пантюркистской и панисламской отсталой политики.

SUMMARY

On July 24, 1908, the “Ittihad ve Terak” (Union and Progress) Committee, which led the opposition forces of the Ottoman Empire, staged a revolution. Despite the Ittihadists’ loud statements about the “establishment of constitutional order and equality”, the national-religious issue remained one of the most complex, multi-layered issues in the Ottoman Empire. In 1910—1911, by adopting the Pan-Turkish ideology and gaining the support of the Muslim tribal nobility, the Young Turks began to openly violate the national-religious rights of national minorities throughout the empire, including its parliament. In 1912, in order to overcome the internal political crisis, the Young Turks began face-to-face cooperation with the Armenian Revolutionary Federation. A memorandum was drawn up, by which the Young Turks were committed to resolving many issues, including national ones, in Western Armenia, but when it became clear to the Young Turks that the “Ittihad ....” had won the election, they immediately renounced the points of the memorandum they had signed. Thus, the national-religious issue in the Ottoman Empire was exacerbated as a result of the pan-Turkish, pan-Islamic backward policies adopted by the Young Turk authorities.